566 Արարատ լեռան ձյունապատ սրտից

1. Արարատ լեռան ձյունապատ սրտից
Հնչում է մի ձայն դարերի խորքից,
Մասիսի ծոցում մի սիրտ բաբախում,
Զարկում է անվերջ, հայ ազգին կանչում.
«Դարձե՛ք, ո՛վ հայեր ողջ Հայաստանի,
Ես Իմ տապանն եմ կանչում բոլորիդ,
Այսօր ներս մտեք իմ եկեղեցին,
Դարձե՛ք ողջ ազգով, ժամն է վերջանում»:

2. Արարատ լեռան կարոտած սրտից
Հայոց աշխարհ է թռչում աղավնին,
Ավետիս սրտում, ձիթենին կտցին՝
«Խաղաղությո՛ւն քեզ»,- ասելու հային:
«Դարձի՛ր, ազգս հայ, դարձի՛ր անվարան,
Արյուն, ջարդ, աղետ պիտի վերջանան,
Ես քեզ կլինեմ վահան ու պաշտպան,
Դարձի՛ր, քեզ կտամ խաղաղ Հայաստան»:

3. Արարատ լեռան թախանձոտ սրտից
Հային է ուղղված պատգամն երկնքից.
«Կանգնած թակում եմ դուռը քո սրտի,
Հայոց աշխարհն է նոր իջևանն Իմ:
Դարձի՛ր, ազգս հայ, Ես քեզ կդառնամ,
Մեղքերդ կներեմ, երկիրդ կբուժեմ,
Ես քեզ կսիրեմ միշտ և հավիտյան,
Ես քո Աստվածն եմ, Իմն ես, Հայաստա՛ն»: